ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՀՐԱՇՔԸ

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ
Norayr.poghosyan@ysu.am

ՄՈՒՏՔ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնն իր միաբանական ժողովի որոշմամբ դիմելու է Ս. Էջմիածնին՝ Երուսաղէմի Գրիգոր Պարոնտէր (1613-1645) եւ Գրիգոր Շղթայակիր (1717-1749) պատրիարքներին սրբադասելու հարցով: 2015 Ապրիլի 23-24ի արարողութիւններով քոյր եկեղեցիների 40 պատուիրակութիւնների ներկայութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սրբադասուեցին Հայոց Ցեղասպանութեան զոհերը: Այդպիսով 400 տարուայ ընդմիջումից յետոյ Հայ Առաքելական Եկեղեցին վերականգնեց սրբադասման կարգը:

Հոգեւոր եւ գիտական շրջանակներում տեսակէտներ են հնչում, որ սրբադասման անհրաժեշտ պայման է սրբացուող գործիչին առնչուող հրաշքների գոյութիւնը՝ արձանագրուած վաւերական աղբիւրներում:

Հարկ ենք համարում յայտնել, որ ձեռագիր մատեաններում պահպանուել է Գրիգոր Շիրվանցի Շղթայակիր պատրիարքի հետ կապուած մի հրաշագործ դրուագ, որին ներկայ եւ ականատես են եղել բազմահազար անձինք՝ հայեր եւ քրիստոնեայ այլ եկեղեցիների անդամներ. այդ պատմութիւնը գրուած է ականատեսի կողմից, եւ ուրեմն չի կարող կասկած յարուցել ճշմարտացիութեան մէջ: Մենք այն քաղել ենք Երուսաղէմի Ս. Յակոբեանց ձեռագրատան թ. 532 ձեռագրից, որին նուիրուած է ներկայ հրապարակումը:

* * *

1729ին վերստին բարձրանում է Ծռազատկի խնդիրը: Այդ թուականին յոյներն իրենց Պասէքը տօնում էին Ապրիլի 6ին, որ համընկնում էր հայոց Ծաղկազարդին, իսկ հայերը Ս. Զատիկը պէտք է տօնէին մէկ շաբաթ յետոյ՝ Ապրիլի 13ին: Երուսաղէմում հայերի ու յոյների մէջ վաղեմի սովորութիւն կար, որ Զատկին նախորդող օրը՝ Ճրագալոյցի երեկոյին կատարուող Լուսաւորեայի մեծ հանդէսով Ս. Յարութեան Տաճարում հայ եւ յոյն պատրիարքները միասին մտնում էին Յիսուսի Ս. Գերեզմանը: Այդ հանդէսին մասնակցում էր ուխտաւորների մեծ բազմութիւն: Իսկ 1729ին, երբ տօնի օրերը տարանջատուել էին, երկու կողմերն էլ տարակուսում էին, թէ ինչպէս պէտք է վարուեն, մանաւանդ որ նախկինում Ծռազատիկի պատճառով մեծ խժդժութիւներ, անգամ սպանութիւններ էին եղել:

Տօնին նախորդող ամիսներին յունաց պատրիարքութեան մի պատուիրակութիւն է այցելում է Շղթայակիր պատրիարքին՝ նրա հեղինակաւոր խօսքը լսելու համար: Վերջինս առաջարկում է Ս. Զատկի տօները թողնել անխախտ, սակայն յոյների տօնակատարութեանը ոչ մի

հայ չի մասնակցի, իսկ հայերի տօնակատարութեանը՝ ոչ մի յոյն, եւ երկու ազգերն էլ թող այդպէս համաձայնութեամբ կատարեն իրենց տօները զատ-զատ: Նաեւ Ս. Աւետարանով հաւատարմութեան դաշն են կապում՝ այդ պայմանը չխախտեն:

Երկու ազգերի միջեւ հանդարտութիւնը վերահսկելու համար իշխանութիւնները նշանակում են Իբրահիմ Աղա անունով մի պաշտօնեայի: Սա Մարտի 16ին սուլթանի հրամանը Կ.Պոլսից հասցնում է Երուսաղէմ, Կ.Պոլսից նաեւ յատուկ նամակ է գրւում Շղթայակրին, յորդորելով այդ օրերին միշտ փակ պահել Ս. Յակոբի դռները, որպէսզի չլինի, թէ հայ ուխտաւորներից կամ միաբաններից մէկը Ս. Յարութեան տաճարը գնալով՝ խռովութիւնների պատճառ դառնայ:

Նախապատրաստական այսպիսի քայլերից յետոյ 1729ի Ծռազատիկը, ըստ մի շարք աղբիւրների հաւաստիացումների, անցնում է համերաշխ մթնոլորտում: Օրինակ, յիշատակագիրներից մէկը բարբառային ոճով գրում է. «*Թվին ՌՃՀԸ-ին ես՝ մահտեսի Գաբրիէլս Սուրբ Երուսաղէմ գնացի տնովըս ծրայզատիք տէի, կայցայք, ղորտ զատիք եղաւ. Աստուած ամէն հավատացելոց նասիպ անէյ, որ երդայն յայնպէս զատիք տեսնու: Յայս շարական ի հորըս անուըն տէր Յունան է եւ կարդացեր է թվին ՌՃԺ-ին (1661), ես կարդացի թվին ՌՃԽԷին (1698), ես այլ եղայ ԾՋ ամաց, գրեցի յայս թվին ՌՃՁԷ (1738), բեւտիրվարի ԻԲ-ին. Յիշեցէք Հայր մեղայիւ, յիշեցի Տէրն մեր Յիսուս Քրիստոս զինքն յիշէ իւր միւսանգամ գալստեանն, ամէն: Հայր մեր որ: Սուրբ Երուսաղէմա հայրայպետըն Տեառն Գրիգոր աստուածաբանութեան վարդայպետին ժամանակին շատ որինէքի առի, Աստուած ամէնուր ալ մայսնայկից անէ*»[2]:

Զատիկը Ս. Յարութեան տաճարում տօնելու հերթը հայերին է հասնում, եւ շաբաթ օրը ըստ հնոց սովորութեան անխափան կատարւում է Լուսաւորեայի հանդէսը: Մինչ ժողովուրդը տաճարում սպասում էր արարողութեան մեկնարկին, Շղթայակիրը բարձրանում է Գողգոթա, Յիսուսի խաչելութեան պատկերի առաջ ծնրադիր, տագնապը սրտում աղօթք է յղում առ Աստուած՝ ասելով. «*Տէ՛ր եւ Աստուած սքանչելեաց, մի՛ յամօթ առներ զմեզ առաջի այլազգեաց: Ո՛վ Տէր, լուսափայլ նշանօք Քո հրաշազարդեա՛ ի մեզ զխորհուրդ ամենակեցոյց Յաղթութեանդ Քոյ*»:

«*Եկն սրբազան եւ մաքրամիտ հայրապետն լալագին դիմօք, անկաւ առաջի Իւղաբերից Սբ. Սեղանոյն, եւ կարգաւորք սկսան ողբալի ձայնիւ երգել զԱպաշխարութեան շարականն, եւ զոր ինչ որ ի ցուցակին կայ, զամենայն ընթերցմունս ընթերցան, եւ կատարեալ զամենայն, ապա եկն ի դուռն Սբ. Գերեզմանին*» (Ս. Յակոբեանց ձեռագիր թ. 532):

Քիչ անց սկսած Լուսաւորեայի հանդէսին, երբ սկսում է թափօրը դառնալ, Շղթայակիրը մնում է Ս. Գերեզմանի առաջ, վրայից հանում է փիլոնն ու վերարկուն, նրա փոխանորդ Հաննա վարդապետը հրապարակաւ զգեստաւորում է, պատրիարքը վերցնում է մոմերի

տրցակը, կարդում ճրագալոյցի աղօթքը՝ «*աւելի արցունքով, քան թէ ձայնով, որմէ ամենուն սիրտերը կը շարժին անօրինակ յուզումով*»: Այս ամէնի մանրամասն նկարագրութիւնը, որ մենք քաղել ենք Ս. Յակոբեանց մատենադարանի թ. 532 ձեռագրից, կարելի է գտնել նաեւ Տիգրան Սաւալանեանցի *Երուսաղէմի Պատմութիւն*ի Բ. հատորի 704-710 էջերին, ուր հեղինակն ասում է, թէ օգտուել է արժանահաւատ աղբիւրներից, սակայն ցաւօք դրանք չի նշում[3]:

Երբ Շղթայակիրը մոմերը վառած դուրս է գալիս Ս. Գերեզմանից, ինքնին՝ առանց նրա հպումի, սկսում են վառուել դռան առջեւը եղած Ս. Լուսաւորչի կոչուած ցած կանթեղը, ապա հետզհետէ վառւում են լատինաց կողմի Պարտէզի, Իւղաբերից սեղանի կանթեղները, յունաց շարանից երեք կանթեղ:

«*Ո՛վ լուսաւորչածաղիկ երամք, աստ կամիմ պատմել ձեզ զարմանալի հրաշս եւ սքանչելի մեծամեծս, զի մինչդեռ ընթեռնոյր զաղօթ վեհն մեր, յանկարծակի ի վերին նախախնամութենէն Աստուծոյ* ***եօթն տեղ կանթեղք վառեցան ինքն իւրեանք, առանց ձեռաց մարդոյ****, թէ Պատանատեղն, թէ Իւղաբերից սեղանն, թէ Պարտէզն եւ թէ Սբ. Գերեզմանի դռան վերայի Սբ. Լուսաւորչի կանթեղն, եւ բոլորին եւս*» (թ. 532):

* * *

1729ի Ծռազատկի այս պատմութիւնը մանրամասն շարադրուած է Ս. Յակոբեանց թ. 532 ձեռագրում, էջ 2ա-20ա, խորագիրն է՝ «Ծռազատկի Պատմութիւն Այլովքն»: Յուժ արժէքաւոր այս ձեռագիրը 141 թղթեայ թերթ ունեցող ժողովածու է, գրուել է ԺԸ.-ԺԹ. դդ., պարունակում է միքանի երկեր, այդ թւում՝ ա) «Որպիսութիւնք Գրիգոր Պատրիարքի», որ Շղթայակրի պատրիարքական տարիների նուիրատուութիւնների մի մատեան է, բ) Ինքնակենսագրութիւն Գր. Շղթայակրի, որ պատմում է 18րդ դարի սկզբից մինչեւ պատրիարք ընտրուելու եւ ապա արքունական հրովարտակով հաստատուելու շրջանն ընկած տարիների մանրամասները, գ) Պատմութիւն վիճոյն վասն Գերեզմանին Ս. Աստուածածնի, որի հեղինակն է Յովհաննէս Վրդ. Կեսարացին, դ) Պատմութիւն մասնական Ս. Յակոբեանց վանուց[4]:

Թիւ 532 ձեռագիրը գրուած է տարբեր գրիչների կողմից տարբեր ձեռագրերով: «Ծռազատկի Պատմութեան» գրիչը, ինչպէս երեւում է շարադրանքից, նոյն ինքը՝ պատմութեան հեղինակն է, մօտ 20 թերթ պարունակող պատմութեան վերջում զետեղել է իր յիշատակարանը այսպիսի տողերով. «*Ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ... յիշեսջիք աղօթիւք զանիմաստս, զտգէտս, զանընտիրս եւ զմեղապարտս, որ իմոյ անվարժ գիտութեամբ* ***զստոյգն ականատես եղեալ գրեցի****, առ ի յիշատակ յետագայիցս*» (էջ 20ա):

Ցաւօք հեղինակն իր անունը չի նշում: Հաւանական է, որ այն գրել է նոյն թուականին ստեղծուած մէկ այլ՝ «Պատմութիւն Գործոց Եւ

Շինութեանց Գրիգոր Պատրիարք Շղթայակրի» երկի հեղինակ Աբրահամ Սրկ. Սամուէլեան Պոլսեցին, սակայն դա սոսկ ենթադրութիւն է: Մենք բանասիրական պրպտումները «Ծռազատկի Պատմութեան» հեղինակին պարզելու հարցում թողնում ենք յետագային:

Ստորեւ ներկայացնում ենք 1729ի Ծռազատկի Գրիգոր Շղթայակրի հրաշքի պատմութեան դրուագը՝ քաղելով թ. 532 ձեռագրից[5]: Գրեթէ նոյնութեամբ պահպանել ենք ձեռագրի ուղղագրութիւնը: Կարծում ենք բնագիրը օգտակար կարող է լինել հայ բանասիրութեանը՝ պատմական, լեզուական առումներով, նաեւ, ինչպէս վերը նշեցինք, իր նպաստը կարող է բերել հայ անուանի ու նուիրական հոգեւոր գործիչներից մէկի՝ Գրիգոր Շղթայակրի կենսագրական մանրամասները ճշգրտելու, եւ, ինչու չէ՝ սրբադասման համար:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾՌԱԶԱՏԿԻ

Յորժամ մերձեցաւ վեց ժամու աւուրն, եկն միւսէլիմ աղայն եւ միւթէվէլլի նախիպ էֆէնտին իւր զօրօքն, եւ բազմեցան մօտ առ Սուրբ գերեզմանին, եւ մտեալ ի ներքս շիջուցին զամենայն կանթեղքն, եւ ելեալ ի դուրս՝ կնքեցին զդուռն Սբ. Գերեզմանին, եւ դու տես, ո՛վ ընթերցող, զաղէտ եւ զկոծ, զտրտմութիւն եւ զաղաղակ մեր հայոց ազգիս, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, մինչ զի ստընդեայ տղայոց մայրք ստինք ոչ տային, այլ լալոտ աչօք գոչէին առ Տէր մեծակական ողբով, զկուրծսն բախէին եւ ի վերայ երեսաց յերկիր անկանէին, որպէս նինուէացիքն:

Տինա վեհն մեր առանձնացեալ եւ անկեալ ի վերայ երեսաց իւրոց՝ առաջի պատուհանին, որ դէմ յանդիման Սբ. Գողգոթային: Այլ եւ առաջի երաշխաւոր Սբ. Աստուածածնի պատկերին եւ ի խոր սրտէ գոչէր առ Տէր, եւ հոսէին արտասուքն աչացն իբրեւ զառու: Եւ եղեւ, զի սակաւ ինչ էանց վեց ժամն, զգացուցեալ ազդեցին նմա իջանել ի վայր: Եւ յորժամ էջ, ամենեքեան ի նա հայէին, թող այլասեռ քրիստոնեայքն, իբր փոխ աչս առեալ ակնդէտ լեալ մեծաւ զգուշութեամբ սպասէին, եւ ոմանք ի յայլասեռից աբեղայից ելեալ առաստաղ Սբ. Գերեզմանին, քանզի կայ անդ երեք չորս փոքր լուսամուտ, զի ի վայր ի Սբ. Գերեզմանն հայեսցին, եւ ոմանք ի նոցա միաբանիցն իւրեանց վերնատանէն հայէին, եւ ոմանք իւրեանց յեկեղեցւոջն նկատէին: Ո՛վ սիրելիք, զայս ամենայն ի միտ առեալ տեսէք զողբ եւ զկական ազգի մերում, կոչելով յօգնութիւն զխաչեալն եւ զյարուցեալն ի նոյն Սբ. Գերեզմանին: Այլ եւ յուսալով զանդառնալի բարեխօսութիւն ցաւագնեալ ծնողի իւրոյ: Եւ մինչդեռ ամենեքեան ի սոյն վշտակրութեան կային եւ հոգային լալոտ աչօք: Եկն սրբազան եւ մաքրամիտ հայրապետն լալագին դիմօք, անկաւ առաջի Իւղաբերից Սբ. Սեղանոյն, եւ կարգաւորք սկսան ողբալի ձայնիւ երգել զԱպաշխարութեան շարականն, եւ զոր ինչ որ ի ցուցակին կայ, զամենայն ընթերցմունս ընթերցան, եւ կատարեալ զամենայն, ապա եկն ի դուռն Սբ. Գերեզմանին:

Եւ առաջի ամենեցուն ակն եղեւ մերկացաւ յանձնէն զհանդերձիկն: Եւ կայր անդ լուսոյ զգեստն: Եւ աթոռակալ վարդապետն սկսաւ զգեցուցանել նմա զնոյն զգեստն, որով մտանելոց էր ի Սբ. Գերեզմանն: Եւ կայր ի նախնեաց սրբոց հարցն զարմանալի աղօթք վասն լուսոյն, որ ուսեալք ի Հոգւոյն Սրբոյ գրեալք էին:

Եւ աթոռակալ վարդապետն ասաց զքարոզ աղօթիցն: Եւ շուրջ զվեհիւն կային եպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք, սարկաւագունք: Եւ սկսան քաղցր եղանակաւ երգել «զԼոյս զուարթն», եւ շրջեալ զգերեզմանաւն հանդերձ վեհիւն, եւ եկեալ հասին ի դուռն Սբ. Գերեզմանին: Եւ աթոռակալ վարդապետն եւ զՍուրբ Գիրգն ի ձեռն Սրբազան հայրապետին, եւ առեալ ի ձեռն զերեք կապ լուսոյ մոմն, որ անուն Սրբոյ Երրորդութեան, եւ սկսաւ վեհն ընթեռնուլն զաղօթքն, զի թէպէտ որ այս աղօթքս կայր, այլ ոչ ընթեռնուին ի թուլամորթութենէ անհոգացեալք եւ կամ ըշտապէին մտանել ի Սբ. Գերեզմանն:

Բայց վեհն մեր լիապէս կատարեաց զամենայն: Արդ հայրապետս մեր մտադիւրութեամբ ի վեր ընծայեցուցանելով զմիտս իւր՝ սկսաւ ընթեռնուլ, եւ հոսէին ի նմանէ քրտունքն ոլոռն ոլոռն, եւ արտասուքն գայր աչացն արեանախառն, եւ իջանէր ի մորուացն ի վայր:

Ո՛վ լուսաւորչածաղիկ երամք, աստ կամիմ պատմել ձեզ զարմանալի հրաշս եւ սքանչելի մեծամեծս, զի մինչդեռ ընթեռնոյր զաղօթ վեհն մեր, ***յանկարծակի ի վերին նախախնամութենէն Աստուծոյ եօթն տեղ կանթեղք վառեցան ինքն իւրեանք, առանց ձեռաց մարդոյ***[6]*, թէ Պատանատեղն, թէ Իւղաբերից սեղանն, թէ Պարտէզն եւ թէ Սբ. Գերեզմանի դռան վերայի Սբ. Լուսաւորչի կանթեղն, եւ բոլորին եւս:*

Եւ մինչդեռ ամենեքեան զարմացման կային, արար Աստուած այլ մեծ հիանալի սքանչելիս, զի յունաց Աւագ եկեղեցւոյ շարանին երեք կանթեղքն վառեցան, վկայ ճշմարտութեան լուսոյն եւ հայոց ազգիս ուղիղ պասէքիս:

Եւ յորժամ զայս զարմանալի սքանչելիս տեսին, ամենեքեան հիացեալ զարմացան, եւ այլ ազգ քրիստոնէից տեսին, զահի հարան եւ պակեան: Եւ այսր ամենայնի աւարտեաց զաղօթքն, եւ հրամայեաց ամենեցուն «Տէր ողորմեա՛» յոլով: Եւ ինքն անկաւ ի վերայ երեսաց իւրոց մեծ ժամս, եւ ի խոր սրտէ հառաջէր եւ լայր, եւ աւարտեցաւ «Տէր ողորմեա»ն: Եւ աթոռակալն տուեալ զերեք կապ մոմն ի ձեռն մեծի վեհին, եւ եկեալ այլ ազգիք քակեցին զկնիքն, եւ դուք լսողք զայս աղէտալի պատմութիւնս՝ «Տէր ողորմեա՛» ձայնեցէք, տես զողբումն եւ զհառաջումն, քանզի ամենեքեան ի դողման կային եւ արտասուս հարեալ լային, գոռումն, գոչումն, մինչ զի ձայնն ի յօդս վերանայր, համարէին որոտումն լինիլ եւ ամենեքեան սարսափման կային:

Եւ ինքն օրհնեցեալն ի յԱստուծոյ մաքրակենցաղ հայրապետն արտասուօք, դողալով եւ սարսափմամբ եմուտ ի Սուրբ Գերեզմանն, եւ արտաքուստ «Տէր ողորմեա՛» գոչէին: Եւ բոպէի մի չափ յամեաց ի ներքս,

եւ վաղվաղակի փառաւորապէս լի լուսով եւ ճառագայթէր լոյսն, իբրեւ զարեգակն, մեծ զարմանքն այս էր, որ շուրով առեալ զլոյսն եւ ել լուսաւորեցեալ, եւ փայլէր երեսն իբրեւ զճաճանչս արեգական:

Եւ տես զուրախութիւն ազգիս հայոց, եւ ամենեքեան գոչէին մեծաւ ձայնիւ՝ «Օրհնեալ է Աստուած», լոյսն Լուսաւորչի աղօթքն ել, փառք Աստուծոյ: Նոյնպէս եւ երեխայ փղայքն զնոյն աղաղակելով վերաձայնէին:

Եւ դու զայս տես, որ ***զվեհըն ոչ թողուին գալ յառաջ, զի ամբոխն ցանկայր ի ձեռանէ նորա առնուլ զլոյսն եւ լուսաւորիլ****: Եւ եպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք լուսաւորեցան ի նմանէ, նոյնպէս ասորւոց ազգն պարաստ կային ի դուռն Սբ. Գերեզմանին, եւ նոքա առին ի վեհէն մերմէ զլոյսն եւ լուսաւորեցան:*

Եւ եւս եւ մեր տէրունական ուխտաւորքն ուրախութեամբ խնդութեամբ առին զլոյսն եւ եղեն մահտեսի: Սակայն ինքն՝ սրբազան հայրապետն նւաղէր մարմնովն, զի կարի յոյժ ճնշէր զմարմինն, համարէ թէ մորթ եւ ոսկր միայն, եւ զօրութիւն մարմնոյն սակաւ եւ ոչ կարաց շարժիլ ի դրանէ Սբ. Գերեզմանին, եւ մնաց այնպէս վասն ամբոխին, մինչ որ երիտասարդքն յափշտակեցին զնա եւ գրկով բերեալ բարձին առ Վերնատան սանդուխտի մօտն, զի թերեւս սակաւ մի հանդարտեսցի, զի վիշտ, նեղութիւն եւ չարչարանս կրեաց:

Արդ, ո՛վ սիրելի ընթերցողք եւ լսողք, զայս ամենայն զոր համառօտ գրեցի, բայց դուք յոլով իմացիք. ո՞ւր են սպասողք եւ դիտողք այլասեռ քրիստոնեայք: Եւ եւս ի մերայնոց ապստամբեալքն ի մեզանէ ելեալ որդունքն, սոդոմայ բաժինքն համարէին, թէ ծաղր լինելոց են հայք: Եւ Աստուած խափանեաց զվատաշուէր եւ զչկամեցողութեան խորհուրդս նոցա, եւ ամենեքեան ցրուեցան, պակեան եւ գլխիկոր եղեն, եւ ոմանք մտին ի խուղս իւրեանց եւ այլ ոչ երեւեցան, քանզի ապտելութիւն, ոխակալութիւն եւ չկամեցողութիւնն կուրացուցեալ էր զմիտս նոցա, բայց մեք լի բերանով փառս եւ գոհութիւնս մատուցաք Աստուծոյ Փրկչին մերոյ յարուցելոյն, որ լուաւ աղօթից փոքր հօտիս մերոյ, ընդ որում մի՛ երկնչիր, հօ՛տ փոքրիկ, որ Տէր Յիսուս զլոյսն պայծառացոյց արեգակնանման, ամօթ ոչ հաւատացողաց եւ երկբայից: Քանզի աստուած բարձրացոյց զեղջիւր ազգիս հայոց, եւ դու տե՛ս, որ ասեմ, ու՞ր են լացողք, ու՞ր են արտասուողք, ու՞ր են գոռողք եւ գոչողք, զի տրտմութիւն [յ]ուրախութիւն փոխեցաւ, լացն՝ [ի] բերկրութիւն, տխրութիւն՝ ի զուարճութիւն: Եւ եղեւ օրս այս մեծ եւ երեւելի, կրկնապատիկ, նշանաւոր դարագլուխ, եւ մեծաւխնդալեաւ հրճուէին եւ ցնծային: Եւ ով տայր զաւետական ձայնս, տեսանել մեզ զօրս հոգեւոր հարսանեաց: Եւ ***այսպիսի զարմանազան հրաշիւք փառաւորեաց Աստուած հայոց, եւ ուրախութեամբ մեծաւ լցեալք ամենեքեան խնդալիցք եղեն****:*

Եւ յետ այսր ամենայնի հայրապետն մեր զգեստաւորեալ շքեղ ականակուռ պայծառ զգեստիւ, թագիւ, եպիսկորանաւ եւ ոսկէզօծ խաչ ի

յաջ ձեռին, եւ պատուական գաւազան ի յահեակ ձեռին, նոյնպէս եւ եպիսկոպոսունք պատուական զգեստով, վարդապետք՝ ըստ արժանւոյն, եւ քահանայք յոլովք շուրջառաւ սաղաւարտով, եւ սարկաւագունք բուրվառաւ տապանակաւ, դպիրք եւ գղերիկոսք մեծագին շապկաւ, եւ բազմամբոխ ժողովրդականք մոմեղինօք, աստուածահրաշ լուսով լուսաւորեցեալք, մեծ եւ փոքր, արք եւ կանայք ունելով ի ձեռս իւրեանց զլուսաւորեցեալ մոմեղէնն: Եւ այսպէս խնդալիցք եղեալ ճխային:

Եւ յորժամ այս ամենայն ուրախութիւնս եղեւ, ել վեհապետն մեր, եւ սրբազան հայրապետն մեծաշուք զգեստով, նոյնպէս եւ զգեստաւորեալքն մեծամեծ խաչերաւ, արծաթէ աշտանակաւ, բարձրաբերձ խաչվառիւ, ցնծղայիւ, զանկակաւ եւ անուշաձայն շարականաւ եւ երգօք հոգեւորօք, խայտալով, պարելով, մեծաւ խրախճութեամբ եւ հրճուանօք թափօր շրջելով, շուրջ զգերեզմանաւն երեք անգամ: Եւ գնացեալ ի տեղի պատանացն, ընթեռնլով զԱւետարանն: Եւ ապա եկեալ հասին ի տեղի Իւղաբերից Սբ. Սեղանին, որ է հանդէպ դէմ յանդիման Սբ. Գերեզմանին: Եւ անդ մատոյց զԱստուածային եւ զփրկագործ Սբ. Պատարագն, վեհն սրբակրօն, եւ ամենեքեան հաղորդեեալք կենարար մարմնոյ եւ արեան Փրկչին մերոյ:

Եւ արձակման Պատարագին, քանզի երեկոյացեալ էր, արարաք զխթումն, եւ առեալ սակաւ կերակուր՝ լիացան, քանզի յոյժ չարչարեալք էին ի արտասուաց եւ [յ]ոտնակացութենէ, եւ զօրացան սակաւ ինչ [յ]աշխատութենէ:

Եւ ես ասեմ ձեզ, ո՛վ սիրելի ընթերցողք, ով ոք այսու հետեւէ յարգեսցէ՝ յարգեսցէ զխնդութիւն մեր, ով ուրախասցի ընդ մեզ, ով կարկեսցէ զբերան հակառակամարտիցն, չհաւատացող երկբայիցն: Եւ սակս ուղղափառութեան մերազնեայց եւ ճշմարտութեան պասէքիս, ով զնոյ(՞) ըմբերանեսցէ սաստելով: Եւ զմեզ սոփեսցի գովասանութեամբ, քանզի բազումքծիծաղային եւ արհամարհեալ անգոսնէին ի ծածուկս ի մէջ սրտից իւրեանց:

Եւ յորժամ տեսին, զոր ինչ եղեւն, եւ զմեծամեծ զսքանչելիսն, զորս արար Տէր, հիացեալ, զարմացեալ պակեան եւ ամօթալի եղեալ գնացին իւրաքանչիւր իւր տեղիս: Եւ հայոց ուղղադաւանքն կային ըսքանչացեալ, հիանային ի վերայ այսր ամենայնի եղելոց իրաց եւ զարմացեալ մնային՝ ասելով ընդ միմեանս. մի՞թէ տեսիլքս տեսաք, եւ այսու ամենայնի փառաւորեալով գոհութիւնս անչափս մատուցանէին հրաշագործողին Աստուծոյ եւ առաւել ուրախութեանցն, ոչ ենչեցին զգիշերն ամենայն, այլ արթնութեամբ հսկէին, պատմէին միմեանց զմեծամեծս Աստուծոյ եւ զեղեալ գործոցն եւ փառս տային Աստուծոյ:

Եւ ի մէջ գիշերին սկսեալ զհսկումն սաղմոսերգութեամբ եւ քաղցրաձայն երգով, եւ մինչ հասին ի հարցն, եւ վեհն մեր քան զերեկոյն այլ աւելի փառօք ճոխացեալ, եւ զգեստաւորեալ զհայրապետական զգեստն կարի

յոյժ պատուական, նոյնպէս եւ եպիսկոպոսունք, վարդապետք, քա-հանայք եւ այլ եկեղեցականք, որպէս ի վերոյ յիշեցաք: Եւ ի վերնատա-նէն ի վայր իջեալ՝ սկսան զհարցն «Այսօր մեծ աւետիք»: Եւ անուշաձայն քաղցր երգով, շուրջ զգերեզմանաւն թափօր շրջեցան, Եւ եկեալ ի դուռն Սբ. Գերեզմանին եւ անդ վեհն մեծ ընթերցաւ զԻւղաբերից Աւետարանն:

Եւ ի վերջ Աւետարանին՝ Փառք յարութեան քո Տէր: Եւ զայս ասելով շրջեցան ի Սբ. Տնօրինական տեղիսն, եւ եկեալ ի տեղի պատանացն՝ նաեւ շրջագայելով, ասացին զՈղորմեայն, զՏէր յերկնիցն, եւ զՓառք ի բարձունս, եւ այնպէս խնդալեաւ եւ ուրախութեամբ շրջեցան:

Եւ հուպ Սբ. Գերեզմանին, ի մեր հայոց թաղի կողմն եդին Աթոռ, եւ նստեալ բազմեցաւ երիցս երանեալ երջանկապատիւ վեհն մեր պատուական: Եւ ընթերցան զԳորք առաքելոցն, զբանն առաջին, եւ զառաջի կայ Աւետարանն, եւ տեառնագրեցին զանդաստանն, եւ ի վերջն Նորաստեղծեալ ասելով ելաք ի վեր ի Վերնատունն: Եւ սկսեալ զՃաշոյն, եւ մատուցաւ սոսկալի պատարագն մեծաւ ճոխութեամբք, հրճուանօք եւ զուարճութեամբ: Թէպետ ամենեքեան լցեալք էին անպատմելի ուրախու-թեամբ, սակայն առաւել խնդութեանցն, առաջի փրկագործ մարմնոյ եւ արեան Տեառն, զորս պատարագիւր ի վերայ Սրբոյ Սեղանոյն, ամէնից աչաց արտասուքն հեղոյր՝ խառն ընդ բերկրութեան, որպէս բարք եւ սովորութիւն մարդկան, քանզի անհնար է ուրախութիւն առանց արտասուաց: Եւ յորժամ եհաս Պատարագն, ի տեղի Ողջունին խրախոյս տուեալ եւ զմիմեանս համբուրեալ անկեղծ սիրով եւ ասեն. Ուրախ լերուք, թէ զինչ Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մեզ եւ ձեզ մեծ աւետիս:

Եւ յետ արձակման պատարագին միահաղոյն իջեալ ի Վերնատա-նէն՝ վեհն եւ պարծանքն եւ կրկին լուսատուն եւ պատճառ կեցութեան արամեան խղճուկ ազգիս: Եւ երկիրպագեաց Սբ. Գերեզմանին, շնորհա-կալ լինելով եւ մնա՛ բարեաւ ասելով, եւ զայն տեսեալ կարգաւորաց եւ հաւատացելոց, զնոյն ուսեալք ամենեքին երկրպագեցին, եւ դարձաք ցնծութեամբ եւ բերկրալի ուրախութեամբ, եւ մեր հայոց վիճակն ի վանքն Սրբոյ մեծի արդարոյն Յակոբ, որ է հրեշտակաց ցանկալի եւ պարծանք մարդկան սեռի, զոր Տէր Յիսուս հաստատունս պահեսցէ, ամէն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

---

[1] http://www.arevelk.am/am/content/2/626/ Գրիգոր-Շղթայակիր---Եւ--Գրիգոր-Պարոնտէր-Պատրիարքներու--Կրնան-Սրբադասուիլ.html

[2] *Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ, Հտր. Դ.*, կազմ.՝ Սահակ Վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, էջ 190:

[3] Տիգրան Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, Հտր. 1-3*, գրաբարից թարգմ.՝ Մեսրոպ Եպս. Նշանեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1931, էջ 704-710:

[4] Ս. Յակոբեանց Մատենադարանի թ. 532 ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս՝ Նորայր Արք. Պողարեան, *Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հտր. Բ.*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 536-543:

[5] Կը ցանկանայինք շնորհակալութեամբ յիշատակել Երուսաղէմի պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանին, որ մեր դիմումին ի պատասխան սիրայօժար համաձայնեց տրամադրել ձեռագիր մատեանների էջերի թուային պատճէնները: Նաեւ Ս. Յակոբեանց միաբանութեան անդամ, պատրիարքական գաւազանակիր Տ. Ներսեհ Աբղ. Ալոյեանին, որ կազմակերպիչը եղաւ պատճէնների ստացման, Տ. Շնորհք Աբղ. Պալոյեանին, որ պատրիարքի յանձնարարութեամբ թուայնացրել է ձեռագրի էջերը:

[6] Բնագրի որոշ ընդգծումները մերն են՝ Ն.Պ.:

THE MIRACLE OF PATRIARCH GRIGOR SHGHTAYAKIR

(Summary)

NORAYR POGHOSYAN

Norayr.poghosyan@ysu.am

The Armenian Patriarchate of Jerusalem will petition the Armenian Apostolic Church at Ejmiatsin to sanctify patriarchs Grigor Paronter (1613-1645) and Grigor Shghtayakir (1717-1749).

As the existence of miracles, written by reliable sources, is considered a necessary condition for sanctification, the author has brought to the limelight an unpublished story found in manuscript N 532 of the Armenian Matenadaran in Jerusalem, which narrates a miracle. According to the story, the miracle happened in the year 1729, in the presence of Armenians and Greeks, during Easter celebrations, when the candles of the church Surb Harutyun were lit from the candles in the hands of patriarch Grigor Shghtayakir without touching. A large number of Armenian and Greek pilgrims witnessed the incident.